

ՀԱՂՈՐԴՈՒԹՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐԹԱԿՈՒԹՄՆԵՐ

Լևոն Բառիկյան

«ԼԱՎԱՐԻ ՈՐՍԻ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հայ դասական դրականության ամենամասնական երկերից մեկը՝ «Լավարի որսը» ունի իր ստեղծագործական ու մշակման հետաքրքիր պատմությունը։

Ինչպես ամեն մի բարձրարժեք գեղարվեստական ստեղծագործություն, այնպես էլ «Լավարի որսը», մեկ շտով կամ զրոյի մեկ հարվածով չի ստեղծվել, այլ բանաստեղծական բարձր զգացողության, գեղարվեստական պրպտող մտքի և քրտնաջան աշխատանքի արդյունք է։

«Լավարի որսի» հրատարակությունը մեծ համարվ բերեց մինչ այդ մի փոքրիկ ժողովածուի հեղինակ Վ. Միրաքյանին¹։

Պոեմն արժանացավ ժամանակի մամուլի ու քննադատական մտքի ուշադրությանը և զննատվեց ըստ արժանիության։ «Տարազը» 1902 թ. իր էջերում տպագրեց ականավոր մանկավարժ-դրականագետ Սեդրակ Մանգինյանի դրվատական հոդվածը, որտեղ ասված է. «Միրաքյանը մի գեղեցիկ բացառություն է կազմում մեր բանաստեղծների մեջ», կամ՝ «նա լավ խրատ և օրինակ է, ոչ ոք ամոթ չպետք է համարե նրանից օրինակ առնելու»²։ «Լավարի որսն» արժանացել է նաև բանասեր Գ. Բալասանյանի³, զրոյ Վ. Փափազյանի⁴, ինչպես նաև հայ դրականության լավագույն պրպտողների, բանաստեղծ Վ. Բրյուսովի բարձր գնահատականներին։

Պոեմի գեղարվեստական բարձր արժանիքները մատնանշելու հետ միասին ժամանակին նշվել են նաև նրա առանձին թերությունները։ Վ. Բրյուսովը, ապա և Լևոն մասնավորապես այն կարծիք են հայտնել, թե պոեմը իրավիճակ է բանաստեղծ Հովհ. Թումանյանի ազդեցությամբ։ Իրավ է, որ հայ էպիկական պոեմի թումանյանի «Մարոյի» (1887), «Անուշի» (1890, առաջին տարբերակ), «Լուսնի Սաքոյի» (1889), «Դեպի անհունի» (1894) և այլ ստեղծագործությունների շնորհիվ անցած դարի 90-ական թվականներին զարգացման մի նոր աստիճանի հասավ, պոեմի ժանրն ավելի խորն ու ունակ բովանդակություն ստացավ։ Բայց իրավ է նաև այն, որ հանճարեղ բանաստեղծի այս երկերից և ոչ մեկը ըստ էության չէին կարող «Լավարի որսի» նախորդը դառնալ, որովհետև իրանք տարբեր ատագծներ ունեցող ստեղծագործություններ են (թեև, իհարկե, չի կարելի բացառել նաև ինչպես նշված, այնպես էլ ընդհանրապես հայ պոեմի ընդհանուր ազդեցությունը Միրաքյանի վրա)։ Իրականում «Լավարի որսը» զրական խոշոր, ըստ էության, աննախադեպ երևույթ էր հայ իրականության մեջ և իրավամբ արժանացավ զրական մտավորականության խոր ուշադրությանը և իբրև զոհար մտավ հայ դրականության պատմության մեջ։ Միրաքյանի պոեմը մի իսկական նորություն էր, իր նմանը չունեցող և զրգված է էպիկական լայն շնչով, իր հետ բերում էր Պուշկինի ու Լերմոնտովի ստեղծագործությունների կենցաղագրական հենքը՝ արեւելյան թարմ ու զուսպեղ պատկերներով։

Միրաքյանի գործի արժեքավորումը առավել ճշգրիտ ու պարզությամբ տրվեց սովետական շրջանում։ Ակադեմիկ Արսեն Տերտրյանը, ժխտելով Բրյուսովի և Լեոյի եզրակացությունները այն մասին, թե Միրաքյանը թումանյանի ազդեցության տակ է, կամ նրա աշակերտը, գրում է. «նկատված են, որ տաղանդները հանդիս են գալիս խմբովին, նրանց ծնում է հասարակական կարիքը. նախապետական կացության անկումը մեղանում նման երևույթ է ծնել»։

1 «Լավարի որսը» հրատարակվեց 1901 թ. «Մուրճ» ամսագրում։ Մինչ այդ Միրաքյանը ուներ մի ժողովածու «Առանց լարերի» վերնագրով, որը հրատարակվել էր 1897 թ. Թիֆլիսում։

2 «Տարազ», 1902, № 46.—47։

3 «Բանասեր», հատ. 5, Փարիզ, 1903, № 10—11, էջ 294—304։

4 Վ. Փափազյան, Հայ դրականության պատմություն, 1910, Թիֆլիս, էջ 586։

ների մեջ արմատներ ձգած բնավորություն, որ դալիս է անհիշելի ժամանակներից և շարունակվում է նախնիների կողմից սահմանված դոկտրինի սրենքներով: Նա վայելել է նահապետական հայերի սրբանվեր հյուրասիրությունները՝ իրրի մեծարման մի անմոռաց իշխություն օտարի նկատմամբ, կամ հարգանքի անսահման ու բուրբանվեր ցույց ծանոթի ու հարազատի հանդեպ: Ողևորվել է հերոսության, քաջության և իշխման դեմ մարտնչելու հոյակապ բնավորությամբ:

Մի երրորդ կողմից նրա տպավորվող միտքն օրորել է Դուլարքի սքանչացումներով լի ու առինքնող բնությունը՝ արոտաշատ լեռներն ու կանաչախիտ ձորերը, սարերից հոսող վճիտ աղբյուրներն ու զլլացող առուները, դարնան «մանուկ արևն» ու աշնան միզապատ լանջերը, կաղբենիկ ձյունածածկ զազաթն ու Ղարախաչ լեռան բարձունքների տակ ծփացող Փարվանա լիճը—ահա այս ամենը աղղկ, տպավորվել ու բանաստեղծական ներշնչման ակունք են հանդիսացել Միրաքյանի համար:

Բանաստեղծը ցերեպներն սիրելով իր ծննդավայրի թովիչ գեղեցկությունները, ճանաչելով ժողովրդի նահապետական պարզունակ կենցաղն ու բնավորությունը—թափանցելով դրանց խորքը, կարողացել է այնտեղից դուրս հանել այնպիսի արժեքներ, որոնք դարձել են «Ալավարի որսը» պոեմը գրելու շարժառիթը և կազմել նրա հասարակական հիմքերը:

* * *

«Ալավարի որսն» ունի շորս տարբերակ: Առաջինը գրված է 1896 թվականին և բաղկացած է 660 տողից:

1898 թվականին, բանաստեղծը նույն հենքով ու ոգով, շարունակում է իր դործի ընդարձակման ու վերակառուցման ստեղծագործական աշխատանքը և դարձնում շուրջ 3000 տողանոց մի երկ: Հայտնի է, թե ինչու, նա այդ վարիանտի վրա դրում է «սկզբնական վարիանտ», երբ պոեմի սկզբնական ժողովրդավար 1896-ին գրած 660 տողն է: Մեր եզրակացությունն այն է, որ հեղինակին չի բավարարել իր առաջին դործը և նա ապրել է ստեղծագործական մի նոր կյանք, համակվել ներքին մի երկունքով և փնտրել նոր «ոգևորության» և «ներշնչման աղբյուրներ»:

«Բժ» «Առանց լարերի» լիրիկ ոտանավորների հրատարակությունը չէր բավարարում ինձ և ևս շարունակ թափառում էի իմ մանկական-պատանեկական րնկեր-լեռների կատարները և որոնում ոգևորության աղբյուրներ» — ասում է Միրաքյանը:

Իր որոնածը նա գտնում է Դուլարքի լեռնաշխարհի գեղեցկությունների մեջ, և բանաստեղծական հայտնուն թափով գրում իր վիպերգը: Հենց այս ձևադրի տարբերակի վրա էլ, առաջին էջի լուսանցքի երկարությամբ, պոեմն արժեքավորող իր մակագրությունն է, որն ևս բանաստեղծ չուզեց. Թումանյանը: Հետագայում Միրաքյանը այդ օրինակի վրա կատարում է տեքստային և գեղարվեստական կարգի բազմաթիվ ուղղումներ, առանց կրճատումներ կատարելու:

1898—1901 թթ. բնկած շրջանում ստեղծվում է նաև պոեմի երրորդ տարբերակը, որն անթրվակիր է: Սա արդեն բավականաչափ կրճատված, հղկված, բոլոր կարգի մշակումները, շտկումները և ուղղումները կատարած ձևադրի ժողովրդական է, որը հիմք է տալիս մեզ նեթագրելու, որ նա ստեղծվել է մինչև պոեմի տպագրության հանձնելը, որովհետև ստեղծագործական և գեղարվեստական կարգի նման աշխատանք կատարելու համար երկար ժամանակ ու ջանասիրություն էր պահանջվում, որին կանգրդառնանք քիչ հետո: «Ալավարի որսը» գրելու շարժառիթների մասին ավելի հանդամանորեն հեղինակն ինքն է խոսում. «Ես շարունակ բարձրանում էի սարերի կատարները, այնտեղից դիտում էի հիասքանչ բնության տեսարանները՝ բարձրաբերձ լեռները, կանաչազարդ անտառները, Բորչալույի ու Ղարախաչի տափաստաններն ու արոտները, կանաչ ֆոնի վրա նկարվող ոչխարների ու դառների հոտերը, իսկ ավելի հեռուն՝ կոպկասի լեռնաշղթան իր ձյունազարդ, պարթև զազաթներով, և այսպիսի անվերջ ապրում էի կախարհիչ հորիզոնի հետ»⁹:

Մանկությունից սկսած Միրաքյանը սիրել է առանձնությունը, ունեցել է շափաղանց անհանդիստ բնավորություն, միայնության մեջ անձնատուր է եղել իր խոհերին ու զգացմունքներին: Մենակ ու անընկեր երկար թափառումները և ուշ ժամերին տուն վերադառնալը կասկած են հարուցում անգամ ծնողների մեջ և դիտվում իրրի հոգեկան խանգարումների արգասիք:

Սակայն աննորմալ թվացող այդ երևույթները պոետի խանդավառ հոգու, ներշնչանք ու

9 Ա. Երևմյան, Վ. Միրաքյան, «Անահիտ», Փարիզ, մարտ-ապրիլ, 1930, էջ 68:

ողեորություններ պրպտելու զրսերումներն էին, որոնք տակավին իրենց սաղմնային վիճակի մեջ էին գտնվում: Բանաստեղծը զգում էր ներքին մի ուժ, բորբոքված մի կրակ, որ անհրեույթ շղթաներով իրեն շարունակաբար մղում էր դեպի բնության հրապույրները: Նա ինքը հոգու ողջ խորություններ հաղորդակից էր հայրենի լեռնաշխարհի հմայքներին և կամենում էր, որ ուրիշները ևս հաղորդակից դառնան իր զգայական աշխարհին:

Եվ նա գրում է իր պոեմի երկրորդ տարբերակը, որտեղ նկատելի են հորդարույն մտքի լայնացող զրառումներ թղթերի վրա, ուր, գեղեցիկ տողերի ու մտքերի հետ միաժամանակ, առկա են նաև անդույն ու անարվեստ կտորներ: Պատահում են հատվածներ ու նկարագրություններ, որոնք պայծառ ցոլարձակների նման աչք են շլացնում, կան նաև տեղեր, որոնք տրամաբանությունից զուրկ բառակոյտեր են: Բերենք օրինակներ.

Սիրում եմ հեծնել ձին արագավազ
Սև ամպերի հետ թռչել սար ու ձոր.
Դիտելով լուսնի սահր նազեկազ,
Անցած օրերը հիշել գլխիկոբ:

Այս գեղեցիկ կտորի կողքին կարդում ենք նաև հետևյալ անիմաստ ու ճոռոտ տողերը.

... Հրաշալի կեղև սիրուն հողեղեն.
Թեպետ և մնաս այստեղ լուռ ընկած,
Սիրո թևերով թռվի՜չ հրեղեն
Կր թռչեմ քեզ հետ հավերժ սեր զրկած:

Նման օրինակները շատ են: Պատահում են թարմ ու գունեղ այնպիսի պատկերներ ևս, որոնք պատենափորված են գեղարվեստական ոչ ճիշտ ձևերի մեջ.

Սիրում եմ քեզ էլ, էյ կարմիր արեգ
Որ լեռան ուսին նստում ես հողնած.
Հավատում եմ, որ -ես մաքիւ երբեք
Պու կմնաս արբուն, երկիրք Բնած10:

Ընդհանրապես, այս տարբերակում տիրապետող տպավորված պոեմի պայծառ գույներն ու երանգներն են, ասես թափանցիկ շղարշի պարուրանքի մեջ՝ հետադա մշակման սպասող:

Բացի սրանից, պոեմում արտահայտություն են գտել նաև ընդհանուր սյուժեի հետ շառնչվող ավելորդ հատվածներ, մանվածապատ բազմաթիվ մտքեր, սուրյնկտիվ ու անտեղի գեղումներ, անճիշտ կառուցված պատկերներ և այլն: Ընթերցողին թվում է, թե բանաստեղծի բոլոր մտքերը, նույնիսկ ու ապրումները հորդվել են միաժամանակ, ներքին մի մղումով, առանց հաշվի առնելու իրենց սահմանն ու տեղը և հեղինակի ձեռքը չի հասցրել նավուր պատշաճի արտահայտելու գեղեցիկ մտահղացումները:

Եվ ահա անմշակ այս հումքը անցնում է բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայով, ևնթարկվում նրա խստապահանջ զրչին:

Պոեմի մշակումը տարվել է երեք հիմնական ուղղություններով՝ սյուժետային, գեղարվեստական և կառուցվածքային, որից և բխում են հերոսների հոգեբանական բնութագրումների փոփոխություններն ու բնավորությունների վերակառուցումները:

Պոեմի առաջին տարբերակը վերջինի կմայրքն է հանդիսանում, ոչ ավելին: Այստեղ չկան սարվորների կյանքի ու կենցաղի լրիվ նկարագիրը, սար բարձրանալու գեղեցիկ պահը, բուրբուկովի հրապուրիչ տեսարանը, բեկերի ու աշխատավորների բախումը, Ալվարդի սրտում սիրո բոցի բռնկման գեղարվեստական հնարանը, Ավաղ որսկանի նահապետական օրենքներով թունավորված հոգեբանությունը և այլն: Պոեմի հերոսներից առկա են Աթոն, Ալվարդը, Ավաղ որսկանը և ծաղիկներ քաղող մի խումբ աղջիկներ: Չկան Կարոյի, Գուսանի, Սարման և Ասլան բեկերի կերպարները, չկան պոեմի օղեթավ երգերը և այլն: Բովանդակությունը պարզ է ու անպաճույճ. սիրո աղբյուրի մոտ Ալվարդը սեր է խոստանում հովիվ Աթոնին: Այդ սիրո խոստումը կատարվում է պրոզայիկ, տեխնիկապես թույլ մի բառյակի մեջ:

Եվ ճաշակելով սիրո բերկրություն,
Ալվարդն արեց զոհաբերություն,
Սրբազան ժայռին վառեց զույգ մոմեր
Սիրո աղբյուրում թողեց չամբույրներ:

Աթոն չափազանց աղքատ է. Ալվարդին տիրանալու միակ հեռավոր հույսը նա կապում է ավազ որսկան գտնելու հետ: Առիթը ներկայանում է. Ալվազ որսկանը մոտ հարյուր տարեկան է և կամենում է իր պատվավոր անունը տալ ամենից առատ որս բերող իգիթին: Աթոն որսա-սարերում հանդիպում է Ալվարդին փախցնող թուրք ավազակներին, նրանց սպանում և աղջկան ազատելով, ներկայանում է Ալվազ որսկանին: Այստեղ Ալվարդը մի այլ հարուստի աղջիկ է, Չնա-լած Աթոն, այդ սխրագործության չամբուր, վաստակում է ավազ որսկանի պատվավոր անունը, բայց այնուամենայնիվ Ալվարդի հայրը մերժում է Աթոնին աղջիկ տալ: Աթոն Ալվարդին փախցնում է հարսանեկան իրավորից:

Եվ պատրաստ բռնած լիթը հրացան,
Նա վազեց ուղիղ դեպ հնչող գունան
Եվ մոտենալով նա հարս ու փեսից՝
Բռնեց ու փախավ Ալվարդի թևից:

Այնուհետև Աթոն և Ալվարդը մի շարաթի չափ ապրում են անտառներում, վաշելում սիրո առաջին բերկրանքի և ապա սպանվում անհայտ իշխանու զնդակից՝ նախ Ալվարդը, որովհետև զնդակը Ալվարդին կաշում է թյուրիմացաբար և ապա՝ Աթոն:

Այսպես է ալվարդում պոեմի առաջին տարրերակը: Նրանում գործող անձերը հարկ եղած տիպականություն չունեն, կերպարները տրված են սխեմատիկ դժերով, առանց խորություն, մակերեսային ու թույլ: Հոգեբանորեն չի պատճառարանված Աթոնի և Ալվարդի սիրո պատմու-թյունը: Աթոն Ալվարդին փախցնում է նշանածի կողքից, հեշտ ու խաղաղ, առանց վախի ու զովարությունների: Անբնական ու անամոռիչ է այս: Դուրս է գալիս, որ հարսանիքի մասնա-կիցները, ինչպես նաև փեսան ու նրա շարաքանները, նահապետական միջավայրի մարդիկ չէին, իրենց նամուսին գերի, այլ լեռնականի շորեր հագած խրտվիլակներ, որոնք Աթոնին շրջապատ-ցան և նա Ալվարդի թևից «բռնեց ու փախավ»: Նման միամտությունը բխում է պոետի դեռևս կենսափորձ չունենալու և իր նկարագրած միջավայրը լավ չճանաչելու փաստից: Դա մի ժամանակ էր, երբ Միրաբյանի հույում բանաստեղծական խլրտումները դեռևս իրենց առաջին առկալծումների մեջ էին: Նա տակավին չէր գտել իր մեջ անթիված զգացմունքների զուրս հորդման ճանապարհը և ապրում էր որոնումների շրջանը, որոնումներ, որոնք պետք է հնարավորություն բնականին այն անսովոր ու զբոս ապրումների ձևավորմանը, որ զրադեցնում էին բանաստեղծի միտքն ու հույն:

1896 թվականին Միրաբյանը փորձում է իր զգայական աշխարհի բոլոր հույզերը պատ-կերել զնդարվետական ավելի բնորոշական ձևի մեջ, բան արդեն հրատարակած լիրիկական ոտանավորներն էին: Ուստի նա ձեռնամուխ է լինում պոեմի ժանրին: Բանաստեղծական նոր ձևն իր հետ բերում էր բավականաչափ զմայրություններ, որը բնականաբար, երիտասարդ բանաս-տեղծը չի կարողանում հաղթահարել և առաջին տարրերակը ստացվում է այդպես զգույն ու պակասավոր:

Առաջին տարրերակում եղած թերությունները լրացվում, ուղղվում ու շտկվում են երկրորդ զրելիս: Հնդկական լուրջ փոփոխություններ է մտցնում պոեմի սյուժետային կառուցվածքի մեջ: Եթե առաջին փոփոխականում չոր ու պրոզայիկ ձևով է դժված երիտասարդ գույզի դժբախտ սիրո պատմությունը, ապա երկրորդում մեծ արվեստագետի նմանությամբ այդ նույն պատմությունը զուգակցվում է բնության և նրա զրկում ապրող մարդու հակադրությանը, որբան զեղեցիկ ու ճոխ է բնությունը, այնքան դժբախտ ու ողբերգական է նրա մեջ ապրող մարդու ճակատագիրը: Ազատ սիրո, սոցիալական պայքարի, ուժի զիրքի նսեմացման և այլ զաղափարների զարգացումը առաջին պլանի վրա դնելով, Միրաբյանը պոեմի սյուժեն դարձնում է ավելի բնական, կուտ ու տրամաբանորեն համոզիչ:

Երկրորդ տարրերակում պոեմի սյուժեն նույնն է, ինչ որ տպագրվածում, այն տարբերու-թյամբ, սակայն, որ վերջնամասում, երբ Ալվազ որսկանն սպանում է Կարոյին՝ Ալվարդը վշտից մոռանում է ամեն կարգի ամոթխածությունը և Կարոյի տված զենքը ձեռքին հորը պատմում

է իրենց սիրո մասին: Ծերունին զգում է իր դործած դաժանության համար և աղերսադին խնդրում աղջկան, որ հետ դառնա տուն.

Ալվարդ իմ, Ալվարդ, դեն դցիր գենքը,
Մի սեղմիլ նրան քո մատաղ սրտին,
Թող արնով ներկվի ծերունուս հերքը,
Իր զուր սպանեց սրտիդ սիրածին:

«Աղաթի» պաշտամունքը կուրք դարձրած քուրմը իսկույն բռնում է դիմադրության թույլ հանապարհը: Ալվարդը «առիսեր կյանքի ծանր է դեհնից» սկզբունքով չի ունկնդրում ծեր որսկանի աղաչանքին և ինքնասպան է լինում: Հայրը արցունքակլած աչքերով պատրաստում է զույգ-դերի գերեզմանը:

...Ախ, Ալվարդ, Կարո, լուռ հռոպելով,
Սերը պատրաստեց մի խոր դիրեզման.—

Մնալով մենակ, անընկեր ու անժառանգ, իր հոգու դատարկությունը ողբալով, ծերունին նախ՝ կորցնում է «տուն-տեղ», ապա՝ խղճի խայթից հալածական, թափառում է մոլորված, ինչ որ մոռացության մեջ հոգու հանդստություն գտնելու ականակալությամբ: Ի վերջո

«Որպեսզի քավի արնոտ հանցանքը,
Նա ժամկոչ մտավ հայոց հին վանքը»:

Այդ ևս չի օգնում: Անմեղ զոհերի ուրվականներն անվերջ հետևում են մարդասպան իգիթին: Մի օր էլ նրա աչքերի առաջ նորից հառնում են Ալվարդի և Կարոյի սխուռտները և ծերունին «Ալվարդ ջան, Կարո, վա՛յ, ո՛ր եք զնում...» բացականչելով՝ առաջ է վազում

«...Եվ բարձր ժայռից այնպես է ընկնում,
Որ հազիվ միայն լսվում է հռոպ...»:

Այսպես է ավարտվում «Հավարի որսը» պոեմի երկրորդ տարբերակը:

Երրորդ և չորրորդ տարբերակները նույն հաջորդականությամբ պատմվում են մինչև Ալվարդի և Կարոյի մահը: Սակայն մշակման ընթացքում հեղինակը լուրջ մոտեցում է հանդես բերում իր նպատակադրմանը: Եթե առաջինում Աթոն է փախցնում Ալվարդին և մի շաբաթ հետո նրանք սպանվում են անհայտ թշնամու ղեղակով, ապա երկրորդում Կարոն է Ալվարդի սիրած իգիթը և սա իր կամքով է փախչում սիրած տղայի հետ.

«Եվ այսպես փախան մթին գիշերով
Հայրական տնից, հորիցը դադտնի
Սպասում էր նա սրտի զարկերով
Իրան սիրելուն ամենին հայտնի»:

Այստեղ Ալվարդն արդեն Ավագ որսկանի աղջիկն է:

Երրորդ և չորրորդ տարբերակները ստեղծելիս, հեղինակը չափազանց մեծ ուշադրություն է դարձնում պոեմի դադափարսկան բովանդակության և հերոսների հոգեբանությունները նոր տեսանկյունից բացահայտելու վրա:

Վերջին տարբերակում, երբ մեռնում է Կարոն, Ավագ որսկանը այլևս այն մարդը չէ, ինչ որ երկրորդ տարբերակում: Այլ նա դաժան, անսիրտ մի վրիժառու է՝ իր գործողության իրավացիության վստահ, նա այլևս գերեզման չի փորում զույգերի համար, անզամ մոտ չի դալիս գերեզմանին: Պոեմը վերջանում է նրանով, որ Ավագ որսկանը լեռներից այլևս տուն չի վերադառնում և ամեն գիշեր իջնում է ձորը, հսկում մեռած աղջկա շիրմաքարի վրա:

Վերջին տարբերակում չկա երկրորդի լալկան նահապետը, այլ առկա է իր սպասված քսված «մուրը» գինքով մաքրող իգիթը: Ուստի, բանաստեղծը երրորդ և չորրորդ մշակումները կատարելիս, ընդգծում է այդ հատկանիշը և Ավագ որսկանի կերպարը քանդակում է, որպես վիթխարահասակ մի արձան՝ նույնքան անհողողող ու կայծր, որքան նրան շրջապատող լեռները:

Այստեղ արդեն քարձրանում է հին աշխարհի տղամարդը, որը չի կարողանում տանել «նամարդ» կարոյի «մուրը»: Եվ երբ նա նկատում է, որ օկլավարին ու կարոն թռչում են ճամփով, զոռում է.

Էդպես ես պատվում հին ալ ու հացը,
Էդպես ես սիրում օրենքն իդիթի,
Քեզ նման նամարդ դող արարածը
'նչի' չի վազուց զոհվել զնդակի...:

Այստեղ արդեն խոսում է նամուսի դերին, որը երբեք և ոչ մի գնով չի դիջի, չի ների «նամարդին» և չի զղջա: Եվ ահա այս խոսքերից հետո, այլևս միջոց չի տալիս, ոչ մի արդարացման խոսք լսել չի ուղում, անհապաղ զենքի է դիմում: Վրեժը լուծված է. հին որսկանի խիղճը մաքրված: Հավաքվում է ամբոխը, բոլորը սղբում են անմուրադ սիրահարներին դիակների վրա, «Մենակ չի լալիս ծերը հանցավոր», քանի որ

ժթեկ նա վերջին օրը ծերություն
Ներկեց իր միակ որդու արյունով,
Իայց համոզված էր, որ արդարության
Ձի դավաճանել դեռ ոչ մի բանով,
...Այլ նրան միայն օրենքն իդիթի
Իր անդարձ ուժով մի օր կդատի:

Այստեղ ծեր որսորդը հիշում է իր իդիթ ժամանակները և դարձանում «մեղ» դարձած մարդկանց «ապօրինությունների» վրա:

Իդիթ չէր ասվում այն տղամարդը,
Որ չէր խոնարհվում սուրբ աղ ու հացին.
...Մարդիկ մանրացան մեծի նման.
Արցունքն է դառել ցավերին դարձան:

Իմ բանաստեղծ Միրաքյանը վերակառուցելով պոեմը՝ իր հերոսի բնավորությունը այնպես է ձուլում նրա արտաքին ձևի մեջ, որի նկարագիրը կազմում է մի անխախտ միասնություն: Ժայռի նման անմատչելի բնավորություն ունի Ավադ որսկանը, ժայռի նման էլ ֆիզիկական արտաքին:

«...Բայց ուրն ու լացը էլ ինձ չեն ազդիլ,
Ծով էլ որ դառնամ, արցունք չի կաթիլ:
Հե՛յ գիդի հա, հե՛յ, իդիթ ժամանակ
Անցար զնացիր, թողիր ինձ մենակ:
Հեռացեք դուք էլ, թողեք միանամ
Ժայռ պապերիս հետ, ես էլ քարանամ:
Ասաց ու լուեց ծերը զլիսիկոր
Ինչպես վիթխարի մի ժայռի բեկոր»:

Ինչպես տեսանք, այսուժեպային կարգի համեմատությունների ընթացքում, Միրաքյանը իր պոեմին տալիս է նաև հասարակական, սոցիալական ու ճանաչողական չափազանց խոշոր արժեք, որը արտահայտվում է բուդակովի, կարոյի ձիազոդության, գիշերային հորդ անձրևի, Ավադ որսկանի հյուրընկալության, Ավադի ու կարոյի սիրո և այլ տեսարաններում: Գեղարվեստական նման տրամաբանական մշակումը հեղինակին հասցրել է իր նպատակադրմանը և երկը դարձրել զրական խոշոր երևույթ՝ բուդովի տարրեր իր նախորդ տարրերակներին:

* * *

Իր լարորատոր աշխատանքի ընթացքում, Վահան Միրաքյանը բանաստեղծական նորանոր դյուտեր է անում: Նա կատարում է ավելացումներ, որոնք գեղեցկացնում և բազմազան դույն ու երանդ են տալիս պոեմին:

Երկրորդ տարբերակում բանաստեղծական չափի զգացողությունը դուրս է հորդել իր սահ-

մաներից, իսկ մշակման ընթացքում խստագույն ձևով է պահպանվել զղացողության հարցը և 3000 տոգանոց պոեմը իր կառուցվածքը բոլորել է 1730 տողում: Վրճառովել, մի կողմ են նետվել ստեղծագործությունը թուլացնող ավելորդ հատվածները: Այսպես, օրինակ՝ 234 տողանոց նախերգանքը և առաջին ու երկրորդ գլուխները կաղմոց 238 տող պոեմի հետ չկապվող պահանջանքներն ու դատադրությունները, իսպառ հանված են: 234 տողից բաղկացած «Նվեր» վերնագիրը կրող գլուխը ոչ մի ընդհանրություն չունի պոեմի բուն նյութի հետ և փոխարինում է նախերգանքին: Այս մեծածավալ հատվածին հաջորդում է առաջին գլուխը, ապա՝ երկրորդը, որոնք դարձյալ նյութի մասին ոչինչ չասում զրառումներ են: Հետաքրքրականն այն է, որ հեղինակն ինքն էլ է պղծում այդ հանգամանքը և, թերևս, այդ է պատճառը, որ հետագա տարրերակներից դրանք ամբողջապես կրճատում է:

Զգում եմ, որ բեզ, սիրելի բններցող,

Զեմ հաղեցնում պոեմիս նյութով,—ասում է նա:

Սրան հակառակ, պոեմի մեջ ավելացված են նոր և գեղեցիկ հատվածներ, որոնք մի տեսակ փայլ ու գեղեցկություն են տալիս երկին և օրդանապես շաղկապվում են սյուժետային հյուսվածքին: Այդպիսի հատվածները մեծավ մասամբ «Ջեյրանի նման», «Մեր տուն եկող ձիավոր», «Աղբյուր-աղբյուր» և այլ երգերն են, որոնք առանձին վերցրած ինքնուրույն ու հմայիչ ստեղծագործություններ են: Ահա մի օրինակ.

Ջեյրանի նման

Բինից դուրս գալու.

Սափարը ուսից

Սարին սուրալը,

Ախ, էդ աչքերիդ

Վառվառն հուրը,

Սիրուն պատկերիդ

Նոր կյանքի բույրը,

Շուրթերիդ բացվող

Վարդը ժպտալիս՝

Մեկ սիրուն աղջիկ,

Հանդիստ չի տալիս: և այլն

Բանաստեղծը կատարել է գեղարվեստական բարդ, բայց գեղեցիկ մի վիրահատություն՝ վիրահատի զգուշությամբ և ուշադրությամբ: Պոեմի մշակումը սկսելով 3-րդ գլխից, Միրաբյանը նրա 80 տողից բնտրել է 22-ը միայն, որոնք իրենց հերթին դարձյալ ենթարկվել են բարեփոխություններին:

Օրինակ.

«Ամեն մի թփից դնդակ է բզկում,

Ամեն մի ձորից արյուն է հոսում—տողերը համապատասխանեցված են պոեմի սյուժետային նոր դժին և փոփոխված հետևյալ ձևով.

«Ամեն մի ձորից աղբյուր է հոսում,

Ամեն մի թփից բյուրբյուր է խոսում...

կամ՝

«Նվ դալար հովիտ և ժայռի կրճերը

Արճազանք տալով, դարուն են հնչում—

երկտողը իր նախնական ձևով եղել է.

«Նվ դալար հովիտ և ժայռի կրճերը

Ծմակ ու կիրճեր, լցվում են երգեր...

Բանաստեղծը ներքին տրամաբանական կապ է ստեղծում տողերի միջև հենց իր լաբորատոր աշխատանքի ընթացքում:

Այսպէս.

...Մաղկալից աշխարհ: անվերջ ձորերի
Շնչում է դարնան բույրով անարատ,
Սանուկ գեղութեան ոգին Գուգարի
Մաղկում է, բացվում կոկոնից գվարս...

Անվերջ ձորերի ծաղկալից աշխարհը այս պէտքում շնչում է դարնան անարատ բույրով, որը տրամաբանական է: Բայց չէ որ «մանուկ գեղութեան ոգին Գուգարի» չէր կարող ծաղկել ու բացվել գվարթ կոկոնից: Եւ հեղինակը վերամշակում է այս մասը, տողերի տեղափոխություն կատարելով աչն պարձնում է կուռ ու գեղեցիկ մի բնապատկեր.

Մաղկալից աշխարհ: անվերջ ձորերի
Բացվում է, ժպտում կոկոնից գվարթ,
Փաբրամ գեղութեան ոգին Գուգարի
Շնչում է գարնան բույրով անսղաւտ:

Կովկաս լեռների արթնացումը պատկերող հոյակապ քսույակը երկրորդ տարբերակում ասես դիտարկողով ձուլված է հսկայական պոեմի տողերի:

Ահա ծագում է արեւ դարնան
Կովկաս լեռների ձյունի պատենէից,
Ջարթնում են մեկ-մեկ սարերն աննման
Մայիսյան անուշ քնի մշուշից:

Բանաստեղծական խորը զգացողությամբ Միրաքյանը դուրս է հանել աչն, քաշել առաջի՝ պլանի վրա—դարձնելով մի հիանալի բնանկար, որով և սկսվում է պոեմը.

Մագում է, մանուկ արեւ դարնան
Կովկաս լեռների ձյունի պատենէից,
Ջարթնում են մեկ-մեկ սարերն աննման
Ջմուսն անվերջով քնի մշուշից:

Սրան հաջորդում է նորից խոսուսն ու կենդանի, նույն շնչությունն ու հենվածքը ունեցող մի այլ պատկեր.

Ահա լավարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թարմացած ուժով,
Սարեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...

Ո՛ր ստեղծագործական այս հրաշալիքը նորից իր նախնական ձևում այսքան գունեղ ու կուռ, այսքան բազմերանգ ու գեղեցիկ չի եղել. միայն բանաստեղծի ստեղծագործական լաբորատորիայի շնոցն է այն թրծել ու դարձրել արձանագործությունը: Եւ հայտ մի լուսեղեն քանդակ: Յուրաքանչյուր բառ, յուրաքանչյուր արտահայտություն՝ յուրաքանչյուր հանգ և վանկ, Միրաքյանը մեկ առ մեկ ջոկում, բնորոշում և դնում է գեղարվեստական անսխալ նժարի վրա: Ծշտում, լրացնում է անճիշտն ու թերին, ուղղում ու շտկում է սխալն ու անսաղակներ:

Ամբողջ հատվածներ, քառյակներ, անդամ դրուխներ, երբ օրդանական կապի մեջ չեն եղել պոեմի հետ, խտացվել են մեկ կամ երկու տողում, կամ դեն նետվել: Այսպես, օրինակ՝ շուրջ երեսուն տող է կազմում Կարոյին թուրքերի կողմից վիրավորանք հասցնելու նկարագրությունը երրորդ տարբերակում, իսկ մշակումներից հետո այն խտացվել է ութ տողի մեջ:

Հետաքրքրական է նաև ամբողջական հատվածների գեղարվեստական տեսքի բերելու փաստը.

Որը տանում է ալաշխի քնշան,
Կուժն ու խնոցին, ճիւղտն ու շաթան,
Որն էլ դարդարված գիրուխներով,
Կնում է բեռնված նախուն հարսներով,
Ինճագոն նաւը փաշում է հանդարտ

Բոժոժ ու զանգեր վզին ու կրծքին
 Դուրս ու կապերտներ, քեկ ունի զարդ.
 Բայց սիրուն հարս էլ կա նրա մեջքին.
 Քայլում է հսկան, մոնչում հսկարտ,
 Պարծենում է նա իր սիրուն բեռնով.
 Երկար շրթունքն էլ կախելով բարդ-բարդ
 Փրփուր է քափում կատուած բերանով:

Երկրորդ տարբերակի այս տասներկու տողի վրա ցույց տանք Միրաքյանի ղեկավարած մշակման մի նշանակալի միայն. առաջին քառատողի չորրորդ տողը փոխված է՝ «օրորվում, անց-նում լեռան լանջերով» տողով: Երկրորդ քառատողի առաջին տողը դարձել է՝ «Բայց նառն ինքնագու՜ Քայլում է հանդարտ», կամ երրորդ և չորրորդ տողերը դարձել են

Նվ օրորելով կապերտներ ու դարդ
 Գեղեցիկ հարսն է նա տանում մեջքին:

Հաջորդ չորս տողերը մշակել է տեղափոխությունների ճանապարհով: Առաջին տողը թողնելով իր տեղում դարձրել է՝ «Մերթ բարկանալով կանգնում է հպարտ», ապա՝ չորրորդ տողը բերել է երկրորդի տեղը, «փրփուր է թափում» արտահայտությունը վերածել «Մերթ փրփուր թափում», իսկ երրորդ տողը չի շարժել, այլ մշակել է՝ «Մերթ երկար շուրթը կախելով բարդ-բարդ» և երկրորդ տողը բերելով չորրորդի տեղը վերածել է՝ «նա պարծենում է ղեղեցիկ բեռով» տողին: Նվ այսպես ամբողջ հատվածը հնչել ու նկարագրական մի սիրուն բանաստեղծություն է դարձել:

Գեղեցիկ է սար բարձրանալու հանդիսավոր ընթացքը՝ արևելյան ձոխ գունաղեղությամբ նկարագրված.

Անցնում են ձիեր և իրարանցում,
 Խրխնջում են բունը, սանձերը կրծում,
 Քնքուշ մետաքսից ոսկեթել գործած
 Աղաչարիներ թամբերին զցած:
 Հուժկու կրծքներից կապած թալիսման,
 Արևելյան ճոխ արծաթն ու ոսկին,
 Ծերմակ դաթիպան, քողն ամպի նման
 Փոփոռում են զնղ հարսների ղեմքին:

Այստեղ դարձյալ բանաստեղծի շինարար գրիչը կատարել է իր յարերար գործը: Այս հատվածին հաջորդող.

Բայց հազիվ միայն քողի արանքից
 Երկու աչքեր են հուր-հուրին տալիս.
 Որոնք կղրկեն հավատ ու խելից
 Խեղուղ մուլային նամազ անելիս:

տողերը շնայած սահուն են ու հնչել, բայց ընդհանուր կապ չունեն նկարագրվող ղեկավարի հետ. ուստի, հեղինակը այն կրճատել է, որից և շահել է պոեմը: Իսկ վերևի ութ տողերը մշակման ենթարկվել, ավելի են ղեղեցկացվել, մտնելով իրենց տրամադրական կապի մեջ ու ձեռք բերել կուռ կառուցվածք.

Թունել է նամփան խիստ իրարանցում,
 Դոփում են ձիեր, սանձերը կրծում—
 Ազնիվ մետաքսից ոսկեթել գործած,
 աղաչարիներ թամբերին զցած,
 Հուժկու կրծքներից կապած թալիսման,
 Արևելյան ճոխ արծաթն ու ոսկին,
 Ծերմակ դաթիքան, քողն ամպի նման
 Փոփոռում են սիրուն հարսների ղեմքին:

Նման օրինակներ շատ կարելի է բերել, բայց բերվածներն էլ բավական են բանաստեղծի սրահանգիտությունը ցույց տալու համար:

Այսպիսով Միրաբյանը շափաղանց բարիխղճություն, աշխատասիրություն և զեղարվեստական առանձնակի մոտեցում է հանդես բերել իր պոեմը կոտ ու ամբողջական դարձնելու և բանաստեղծական որոշակի բարձրության հասցնելու համար:

* * *

«Լալվարի որսը» պոեմի տարրերակների մեջ ուշադրավ տեղ են զբաղում նաև կոմպոզիցիոն փոփոխությունները:

Կրճատումներ կատարելուց, էպիտետներ, բառերի, տողերի, հանդերի ու վանկերի մշակումներից բացի, նկատելի են կառուցվածքային շատ հետաքրքիր տեղաշարժեր: Երբեմն պոեմի առաջամասի մեկ տողը, կամ մեկ քառատողը, կամ մի ամբողջական հատված տեղափոխված է պոեմի վերջին մասը, վերջին մասից՝ միջին մասը, միջին և վերջին մասերից՝ առաջին մասը և այլն:

Այսպես, օրինակ՝ պոեմի երկրորդ տարրերակի երրորդ դրուսը, որով սկսվում է տպագիր պոեմը, բացվում է հետևյալ քառատողով՝

Լեռների աշխարհ, Դուդար հարազատ,
Միրում եմ հոգդ ու ջուրդ անարատ,
Մարերդ կորած մութ ամպերի մեջ,
Միրում են նույնպես ման դալով անվերջ:

Սրան հետևում է.

«Սև-սև ծերպերով ահեղ ցիր ու ցան,
Լեռների և կանգնած բնության արձան» սողերը,

որից հետո վաթսուներկու տող նկարագրական հատվածին հաջորդում է տպագիր տարրերակը բացույց բեռնակարը՝

Ահա ծագում է արևը դարան
Կովկաս լեռների ձյունի պատենշից,
Զարթնում են մեկ-մեկ սարերն անեման,
Անուշ մայիսյան անվրդով ֆնից:
Ոսկեզօծվում են լեռները զարնան
Ռոտա կուսական նառգայքներով.
Ռեծաբանման պսպղուն շղթան,
Փայլում է նրանց հագար գույներով:
Հսկա լեռների ձյունափառ ուսին
Ուրեր բազմեց թաբաղած ուժով,
Սաբեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով:

Իսկ սրան՝ «Ահա դարան հետ և շարան-շարան» հատվածը: Տպագիր վարիանտում կարդում ենք այսպես.

Ծագում է մանուկ արևը դարան
Կովկաս լեռների ձյունի պատենշից,
Զարթնում են մեկ-մեկ սարերն անեման
Վառան անվրդով ֆնի մշուշից:
Ահա Լալվարի վիթխարի ուսին
Բազմում է արփին թաբաղած ուժով,
Սաբեր ու ձորեր իրար երեսին
Նայում են, ժպտում ամպի մշուշով...
Վերջին ձյուններն էլ ահա հալ բեկան
Արտասովից իսկույն լեռների հսկան... և այլն:

Ինչպես նկատվում է, վերևի տասներկու տողից չորսը կրճատված է և պոեմում տեղ չի գտել, իսկ հատվածի շարունակությունը կաղմում են երկի զանազան հատվածներից անջատած և խրմ-բավորումներ կատարած տարրեր տողերն ու մասերը:

Կամ՝

Կանաչի վրա՝ հալթավան ձևերին
Կրոնամուլ թուրքը չոքեց նամագի.
Ջևղերը զղույշ տանելով միջին,
Աղոթք է անում աստծուն մեկուսի:

Այս քառատողը ձևագիր երկրորդ տարբերակում զրկված է «Գուգարի լեռներ նորից կյանք առան» (որը տպագիր վարիանտում կարդում ենք «Մարեր ու ձորեր նորից կյանք առան») տողից անմիջապես հետո, իսկ տպագիր տարբերակում տեղափոխված է երկրորդ զլխի առաջին ենթա-զլխում «Արևը շնչած սարվորն արթնացավ» հատվածից հետո:

Հեղինակին շեն բավարարում իր նախկին մտքերն ու պատկերները, համեմատություններն ու հակադրությունները, գույներն ու երանգները: Նա անընդհատ փոխում ու փոփոխում, հղկում ու կոկում է. թարմ, հակիրճ ու զեղեցիկ մտքեր ու պատկերներ զնում իր նախկինում գրածների փոխարեն, որպեսզի պոեմը դառնա ավելի սահուն ու հյուսված, ավելի տպավորիչ ու օրիգինալ և հասնի կոնկրետության: Երկրորդ տարբերակում սարվորների տեղափոխման, նրանց վրան-ների պատրաստման ու զրադմունքի հետևյալ նկարագրությունը.

Հենալանջերի սիզավետ լանջին
Բուսել են արդեն անվերջ վրաններ,
Բայց դարձյալ խառնված քոչ-քոչի միջին՝
Դեռ երևում են ուղտի քարվաններ:
Ահա ալաշուխ սառն աղբրի ափին,
Նրա հետ կցված դադա-բինաներ,
Ըրոնք լենվել են բարձր քարափին
Ինչպես ծեր արծվի կարկատած բներ:
Խմում են աղբրի ջուրը զովարար,
Ուտում են անուշ ամլիկը դառան,
Արտո զնացին ձի, ոչխար, տավար.

Գուգարի լեռներ նորից կյանք առան... անհեթեթ է, պատկերները կառուցված են ոչ ճիշտ (սխալալանջերի սիզավետ լանջին): Նրանում կան տողերի հաջորդա-կանություն խախտումներ, անհաջող դասավորություններ և այլն: Իր լարողատոր աշխատանքի ընթացքում, այս հատվածին հաջորդող «Կրոնամուլ թուրքի» «նամուզի» տեսարանը անջատե-լով և իր համապատասխան տեղը տանելով, հեղինակը արմատական փոփոխություններ է մտ-ցրելում այս հատվածի մեջ: Նկատենք, որ սույն տողերին նախորդում է սար բարձրանալու ըն-թացքի տեսարանը.

«Հեռերի տունն է. մարդ և անասուն
Ուրախ երգերով դիմում են սարեր..»

Տրամաբանորեն մարդիկ և անասունները պետք է որ տեղ հասնեն, ապա վրաններ խփեն-Ուստի Միրաթյանը այս եղած հրկու տողը նկատելի փոփոխությունների ենթարկելով, ավելաց-նում է ևս երկու տող և հատվածը ստանում է նոր որակ.

Քարվանի ծայրը սարերը հասավ,
Հասավ ու ձուլվեց թուխ ամսյերի հետ,
Վրան-վրանի հետևից բսավ
Ծաղիկների մեջ գույն-գույն սիրավետ:

Ավելացրած երկու տողերը, բնականաբար, խախտում են բանաստեղծության շարահասու-թյունը և փոխում կետադրությունը: Այս դեպքում հատվածի մնացած մասը լրացվում է նոր տողերով և ամբողջական փոխում թև՝ մտքերը, թև՝ պատկերները և թև՝ գույներն ու կառուց-վածքը: Նախկին քառյակի երրորդ և չորրորդ տողերը զրկվում են իրենց շարահյուսական վի-

ճակից և մնում առանձին, իներես անիմաստ, որովհետև նրանց նախորդ երկու տողերը նորերի հետ առանձին քառատող են դառնում և ձևը են բերում ինքնուրույն իմաստ: Բայց բանաստեղծը այստեղ կանգ չի առնում, այլ շարունակում է իր նոր լրացումները.

Դաշտերից խանձված, սառ ջրի կարոտ
Դալիս են, իջնում ամեն մի ամառ,
Նոք, լալվար, լեջան աղբյուրների մոտ,
Շողերից ազատ ապրելու համար:

Երկի այուժեի փոփոխություններին և ղեղարվեստական մշակումներին համեմատ, փոփոխության են ենթարկվում նաև հերոսների հոգեբանությունը, նրանց գործողությունները, վարքագիծն ու սովորությունները: Այսպես՝ առաջին տարբերակում Աթոն շունի գործողությունների այն լայն շրջանակը, ինչ որ ունի Կարոն՝ երկրորդ տարբերակում: Աթոն աչքի է ընկնում և Ավագ որսկան դառնում Ալվարդին թուրք ավազակներից ապատելու համար միայն, մինչդեռ Կարոյի գործողությունները դուրս են դալիս հայ օրանների շրջանակներից, լայնանում, գունազարդվում են Ասլան բեկի «Սնուկ ձին» փախցնելու, ժողովրդին պաշտպանելու, Ալվարդի ձեռքով բուժվելու և այլ ղեղեցիկ պատմաներով: Աթոն առաջին վարիանտում «որք ու անագզ» չէ, ունի մայր, իսկ ինչ վերաբերում է Կարոյին՝ «Ո՛վ աղղ ունի նա, ոչ տեր-տիրական», մեծացել է բնության ծոցում անահ ու աներկյուղ, թուրք բեկերը նրան անվանում են «Դալի էրմանին»: Թուրքերը սարսափում են Կարոյից: Բուղակովի տեսարանում, երբ բեկերը իրենց բուղի պարտության վրեժը ուզում են հայերից հանել, սարի ղլխից լսվում է մի ձայն.

Միք վախիլ, տղեք, տվեք թուրքերին
Չայնը դոռալով կովի դաշտ վազեց.
— Փախեք հա, փախեք «Դալի էրմանին»
Թուրքերն ասելով զազեքը մտան:

Երրորդ և չորրորդ տարբերակներում հայ սարվորներին օգնելու փաստը վերադրված է Ավագ որսկանին, որովհետև երկի կենտրոնական դեմքը Ավագ որսկանն է և նրա շուրջ են պտտվում բոլոր դեպքերը: Դրա փոխարեն երրորդ տարբերակում Կարոյի շուրջը ստեղծվում է սնոտիապաշտական մի առասպել, որն է՝ լավելի է բարձրացնում նրա հեղինակությունը և նույնպես համարձակ գործողություններ կատարելու:

«Թիլիսմ ունի նա իբրև զորավար,
Ջեն հասնում նրան և ղեկավարներ»
Եվ այդպես ահով պատմում են իրար
Դալի էրմանու շատ հրաշքները:

Այս բանը երկրորդ տարբերակում չկա, իսկ չորրորդում այն արդեն վերադրված է Ավագ որսկանին:

Ջեռաղիր տարբերակների համեմատություններից բացի լսողանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև «Որսի» հրատարակված տեքստերի համեմատությունը: 1901 թ. «Մուրճ» ամսագրում լույս տեսած պոեմի տեքստը նրա հետագա հրատարակությունների հետ համեմատելով տեսնում ենք նորից ահադին տարբերություններ՝ ավելացումներ ու կառուցվածքային փոփոխություններ, որոնք հետադադրում կատարել է հեղինակը:

Պոեմն ավելի կուռ, ներդաշնակ, ղեղեցիկ ու բազմերանգ դարձնելու համար կատարված մշակումների ընթացքում նա փոփոխել է մի շարք բառեր, որոնք բարեհնչյուն չէին, անհամապատասխան էին տվյալ նախադասությանը կամ սխալ էին օգտագործվել: Օրինակ՝ «Մուրճ» ամսագրի հրատարակությամբ՝ «Շնչում է զարնան բույրով անաբառ», «Բռնել է ճամփին թուղ իրարանցում», «Մայում են, բայում դառն ու մաքին» կամ «Բն զող լինելի թուրքի պես անմիտ» և այլն, հետագա հրատարակությունների մեջ կարդում ենք՝ «Շնչում է զարնան բույրով անաբառ», «Բռնել է ճամփին խիստ իրարանցում», «Մայում են, բայում դառնուկն ու մաքին», «Թն զող լինելի շատի պես անմիտ» և այլն:

Միևնույն ժամանակ հաջորդական ճիշտ դասավորություն տալու համար տեքստի մեջ կատարել է կառուցվածքային բազմաթիվ փոփոխություններ: Օրինակ՝ «Խեղճ հովվի կինն էլ»

քառասունը «Մուրճ»-ում ձուլված է «Հեռուների տունն է» նկարագրական հատվածի հետ, որը չի կապվում նկարագրության ընդհանուր հենքին, ուստի բանաստեղծը հետագա հրատարակությունների մեջ այդ քառյակը տարել է հատվածի վերջը, որը մի տեսակ ֆինալի դեր է կատարում:

Այս բոլոր համեմատություններն ու օրինակները ցույց են տալիս, որ բանաստեղծ Վահան Միրաքյանի ստեղծագործական լարորատոր աշխատանքը եղել է չափազանց արդյունավետ: Այդ ընթացքում նա չսկսել է առաջնայինը երկրորդականից, կարևորը՝ անկարևորից և հասել ցանկալի արդյունքի: Նրա գրչի տակ ձևավորվել և նոր բովանդակություն է ստացել «Հալիվարի որսը»՝ իր գեղարվեստական բարձր հատկանիշներով, իր սոցիալական ու հասարակական որոշակի հիմքերով, իրեն մեր դասական գրականության բյուրեղացած արժեքներից մեկը: